

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

**Բաց Բաժնետիրական Ընկերություն**




**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**

**Հաշվետվություն թիվ 42, 30.03.12թ.**


տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,192,401 հատ,	25,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝

<b>Սուրեն Կարապետյան</b>	<b>Վարչության անդամ, Տարածքային ստորաբաժանումների գործունեության կոորդինացման բաժնի պետ</b>		<b>30.03.12թ.</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Տիգրան Գալստյան</b>	<b>Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ</b>		<b>30.03.12թ.</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Դավիթ Հարությունյան</b>	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</b>		<b>30.03.12թ.</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

<b>Աշոտ Օսիպյան</b>	<b>/Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն</b>		<b>30.03.12թ.</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

30 մարտի 2012 թ.

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալի, վարչության անդամի պաշտոնում Նշան Գրիգորյանին նշանակելու մասին (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի 2012 թվականի մարտի 30-ի թիվ 10/03Ա) որոշումը (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան

«30» մարտի 2012թ

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 10/03Ա

### ՆՇԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21<sup>6</sup>-ի 1-ին մասի գ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի գ) ենթակետը, քննարկելով Բանկի գործադիր տնօրեն Ա.Օսիպյանի առաջարկը՝ Նշան Գրիգորյանին գործադիր տնօրենի պաշտոնում նշանակելու մասին՝ Բանկի Խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2012թ.-ի ապրիլի 02-ից Նշան Գրիգորյանին նշանակել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալի, վարչության անդամի պաշտոնում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրեն Ա.Օսիպյանին հանձնարարել ապահովել Նշան Գրիգորյանի ՀՀ Կենտրոնական բանկում սահմանված կարգով վարչության անդամի պաշտոնում գրանցվելու գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝

Բ. Բեգլարյան



*Handwritten signature and date: 1 եպր 2012 թ 5'*

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Քաղաք՝ 0010, ԳՂ, ք. Երևան, Պուշկինի 19 Գեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

28 մարտի 2012 թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

### Հ Ր Ա Մ Ա Ն Ն 228 Ա

#### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի Հոդված 209-ը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21<sup>10</sup>-ի 3-րդ մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 14.9-ի կետի բ) ենթակետը՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ.

1. Լիբանանում կայանալիք բանկային ֆորումին մասնակցելու նպատակով 2012 թվականի մարտի 29-ից մինչև 2012 թվականի ապրիլի 01-ը ներառյալ Բանկի գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանին գործուղել Լիբանան:
2. Բանկի գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը 2012 թվականի մարտի 29-ից մինչև 2012 թվականի ապրիլի 01-ը ներառյալ դնել Բանկի գործադիր տնօրենի տեղակալ Դավիթ Հարությունյանի վրա:
3. Բանկի Հաշվապահական հաշվառման վարչությանը՝ գործուղման հետ կապված ծախսերը կատարելու համար տրամադրել անհրաժեշտ առհաշիվ գումար:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գործադիր տնօրեն՝



Աշոտ Օսիպյան